Focus Group Survey Analysis

Faculty of Mathematics and Mechanics

MA Study Programme “Applied Statistics and Data Science”

Participation - 4 Students

Initial Ideas and Information about the Study Programme

Ուսանողները ընտրել են տվյալ կրթական մագիստրոսական ծրագիրը, քանի որ հետաքրքրված են մասնագիտացմամբ. առարկաների բազմազանությունը ու ավելի խորացված անցնելը, ինչպես նաև երիտասարդ դասախոսների ներգրավվածությունը դեր խաղաց ընտրության հարցում: Ծրագրի մասին ուսանողներից մեկը իմացել է Մաթեմատիկա և ինֆորմատիկա ֆեյսբուքյան էջից, այնուհետև ծանոթացել է հենց ծրագրի կայքով ու դիմել, իսկ մյուսը՝ ընկերներից, այնուհետև ավելի մանրամասն ուսումնասիրել է կայքէջը:

Ուսանողները երկուսն էլ բակալավրիատը սովորել են այլ բուհերում և համեմատական տանելով ԵՊՀ-ի ու, մասնավորպաես, տվյալ կրթական ծրագրի հետ, նշում են, որ իրենց սպասելիքները, կարելի է ասել, գերազանցվել են: Ուսանողները հատկապես բավարարված են նրանով, որ դասաժամերը այնպես են դասավորված, որ հարմար է աշխատող ուսանողներին, դասախոսական անձնակազմը պատրաստակամ է գիտելիք փոխանցելու, դասերը ինտերակտիվ են:

Students' Satisfaction with the Study Programme

Կրթական ծրագրի առավելություններից են մաթեմատիկայի խորացված դասավանդումը, ի տարբերություն այլ ֆակուլտետների, որտեղ սովորեցնում են մեքենայական ուսուցում, մաթեմատիկական մասն այդքան խորը չէ: Նշվում է նաև այն, որ դասախոսները ոլորտում են աշխատում, ինչպես նաև դասերի ժամերը: Դասերը սկսվում են 18:30, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին աշխատել:

Կրթական ծրագրի թերությունը երկու ուսանողն էլ նշեցին պրակտիկաների պակասը, պրոյեկտներ չիրականացնելը: Աշխատանքի ընդունվելիս գործատուին առաջին հերթին հետաքրքրում են գործնական հմտությունները, իսկ համալսարաններում մեծամասամբ պրակտիկաները ձևական բնույթ ունեն:

Content of the Study Programme

Մասնագիտացման մեջ ուսանողները կարևորում են մաթեմատիկական խորը հիմքերը, ինչպես նաև ծրագրավորման հմտությունները: Ուսանողները բարձր են գնահատում այն, որ ստանում են բազմակողմանի գիտելիքներ, աշխատաշուկա են մտնում տարբեր հմտություններ ձեռքբերած: Դրական են գնահատում նաև հզոր համակարգիչների առկայությունը, որոնցից կարող են ցանկացած ժամանակ օգտվել: Կրթական ծրագիրը ուսանողները համեմատել են այլ համալսարանների կրթական ծրագրերի հետ ու կարծում են, որ իրենցը բավականին հաջողված է: Հաջողության գրավականը համարում են դասախոսական կազմի տարիքով երիտասարդ լինելը, էնտուզիազմը ու մոտիվացիան: Նշվեց, որ մինչև կրթական ծրագիր կազմելը դասախոսները կարծիք են հարցրել ոլորտի մասնագետներից, թե ինչ ընդգրկեն ծրագրում: Այդ պատճառով ծրագիրը ստացվել է ժամանակակից:

Individual Work/Self Study

Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերին, ապա ուսանողները նշեցին, որ իրենք գնալու են համագործակցող կազմակերպություններ, որտեղ իրենց առաջադրելու են խնդիր: Խնդրի լուծման աշխատանքներն էլ կդառնա հետագայում թեզ: Նման աշխատանքով ուսանողները հետաքրքրված են:

Անհրաժեշտ գրականության խնդիր չունեն, քանի որ բոլորը տիրապետում են անգլերենին: Նյութերը կամ գտնում են համացանցից, կամ դասախոսներն են տրամադրում: Նշվեց, որ եղել են առարկաներ, օրինակ՝ մաթեմատիկան, որ անգլերենով է դասավանդվել:

Թեզերի գիտական ղեկավարների հետ շփումը կարևորում են, քանի որ նրանք ուղղորդում են ուսանողներին, թե ինչպես կատարեն իրենց գիտական աշխատանքները:

Կրթական ծրագրի ղեկավարին ճանաչում են և դրական կարծիք ունեն նրա մասին, որպես դասախոսի: Գիտական սեմինար դեռ չեն ունեցել և տեղյակ չեն լինելու է, թե՞ ոչ:

Այլ ինքնուրույն աշխատանքներից ուսանողները նշեցին տնային հանձնարարությունները, որոնք համարում են օգտակար մասնագիտական կայացման համար, քանի որ թույլ է տալիս տեսական նյութը կիրառել խնդիրներ լուծելով:

Ուսանողները ևս մեկ անգամ նշեցին գործնական դասերի և տարբեր պրոյեկտների կատարման պակասը:

Թեզերի, էսսեների գնման դեպքերի չեն հանդիպել և իրենց մասնագիտացման համար դա բացառում են: Կարծում են, որ դասախոսը պետք է ավելի ուշադիր լինի և չընդունի այն աշխատանքները, որոնք կարծում է, որ գնված են:

Professional Work-Placement/Practice

Մանագիտական պրակտիկա ուսանողները դեռ չեն անցել և տեղյակ չեն լինելու է, թե ոչ: Նրանց կարծիքով մասնագիտական պրակտիկան արդյունավետ կլինի, եթե իրենց հնարավորություն տրվի ընտրելու ճյուղը, որով ուզում են շարունակել, ինչպես նաև կարողանան համագործակցող ընկերությունում աշխատել մի քանի ժամ: Ուսանողները նշեցին, որ աշխատաշուկայում իրենց մասնագիտությունը պահանջարկ ունի մեծ կազմակերպություններում, սակայն նրանք էլ պահանջում են կամ փորձառու մասնագետ, կամ պետք է ներկայացնես պրոյեկտ, որը արել ես: Իսկ ավելի փոքր կազմակերպությունները ինֆորմացիայի պակասի պատճառով լավ չեն պատկերացնում տվյալ մասնագետի գործառույթները և հմտությունները:

Մասնագիտական պրակտիկան ուսանողները ցանկություն հայտնեցին անցնել արդեն կազմավորված թիմում, որը կկարողանա ուղղորդել իրենց: Ինչպես նաև պրակտիկան լինի երկարատև մեկից երկու ամիս, որպեսզի կարողանան հնարավորինս գործնական հմտություններ ձեռք բերել:

Teaching Staff and Teaching Methods

Արդյունավետ դասախոսը ուսանողների կարծիքով պետք է ունենա ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքներ և լինի ոլորտում կայացած մարդ: Իրենց կրթական ծրագրում դասավանդում են երիտասարդ, օլիմպիադաների մեդալակիր, ոլորտում մեծ պրոյեկտներ ղեկավարող դասախոսներ, ովքեր նյութը մատուցում են կոնկրետ, հստակ, մատչելի, չեն շեղվում թեմայից: Գնահատում են այն, որ դասախոսները սիրում են իրենց առարկան, հաճույքով են մատուցում նյութը: Կրթական ծրագրի լավագույն դասախոսներն են՝ Կարեն Քեռյան, Միքայել Պողոսյան, Վազգեն Միքայելյան, Շանթ Նավասարդյան, Արնակ Պողոսյան:

Գնահատման համակարգից գոհ են, սակայն կարծում են, որ լավ կլիներ որակական գնահատականներ լիեն (*մասնակիցը համեմատական է տանում «Իրական դպրոցի» գնահատման համակարգի հետ)*:

Ուսուցումը ավելի արդյունավետ դարձնելու համար ուսանողները առաջարկում են ավելացնել գործնական դասերի քանակը:

Opinion on Yerevan State University (YSU)

Ուսանողները նշեցին, որ ընտրել են ԵՊՀ-ն, քանի որ այստեղ մաթեմատիկայի ուժեղ դպրոց կա: Ընդհանուր առմամբ դժվարացան որևէ կարծիք հայտնել ԵՊՀ-ի մասին, քանի որ բակալավրիատը այստեղ չեն սովորել, իսկ այժմ էլ դասերը ուշ ժամի են, երբ ուսանողների մեծ մասը արդեն ավարտած է լինում իր դասերը: Մասնակիցների համար դրական էր այն, որ չեն առնչվում ուսանողական խորհրդի կամ այլ ուսանողների հետ:

Միայն ուսանողներից մեկը նշեց, որ ԵՊՀ գրադարանում չկա wifi, վերանորոգված չէ, չկան հարմարություններ համակարգիչը միացնելու համար: Մյուս ուսանողն էլ նշեց, որ գրադարան չի գնացել, չի կարող կարծիք ասել: Իրենց ֆակուլտետի լսարաններից գոհ են, կարծում են տեխնիկապես հագեցած է: